

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ

Հավելված № 2

Հաստատված է

«Այդի Բանկ» ՓԲԸ Վարչության Նախագահի
2022 թվականի -ի N -Լ կարգադրությամբ«ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ ՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎՈՂ ՔԱՐՏԵՐԸ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՎՃԱՐԱՅԻՆ ԴՐԱՄԱՊԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Պատասխանատու ստորաբաժանումներ	Թվային բանկինգի տնօրինություն
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	
Տարածումը	Բանկի բոլոր ստորաբաժանումներ
Այլ դրույթներ	
Առնչվող փաստաթղթեր	«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը

 IDBank	0900_FO_KRG_300522_Privacy_01_02			ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ
«Այդի Բանկ» ՓԲ Ընկերության կողմից թողարկվող քարտերը էլեկտրոնային վճարային դրամապանակներում գրանցման եվ օգտագործման կանոններ	Կիրառման ամսաթիվը 31/05/2022	Խմբագրություն 1	Էջ 2 / 3	

1. Սույն փաստաթուղթը սահմանում է «Այդի Բանկ» ՓԲԸ-ի /այսուհետ՝ Բանկ/ կողմից թողարկվող քարտերը էլեկտրոնային վճարային դրամապանակներում գրանցման և օգտագործման պայմանները:

2. Բանկի Քարտապանը /այսուհետ նաև Քարտապան/, իր քարտը էլեկտրոնային վճարային դրամապանակում ավելացնելով, միաժամանակ Բանկին տալիս է իր համաձայնությունը հետևյալ պայմաններին.

1) ԲԱՆԿԻ ՔԱՐՏԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՔԱՐՏԱՊԱՆԻ ԿՈՂՄԻՑ.

ա) Քարտապանը հնարավորություն ունի գրանցել էլեկտրոնային վճարային համապատասխան համակարգի՝ դրամապանակի կողմից ընդունելի իր քարտը էլեկտրոնային վճարային դրամապանակում՝ տվյալ դրամապանակում քարտի գրանցման պայմաններին համապատասխան:

բ) Քարտապանը էլեկտրոնային վճարային դրամապանակում քարտի գրանցումից հետո կարող է տվյալ դրամապանակը սպասարկող առևտրի և սպասարկման այլ կետերում կատարել քարտով վճարումներ:

2) ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՐՏԻ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԼԻՆԵԼԸ.

ա) Բանկն է որոշում որևէ էլեկտրոնային վճարային դրամապանակում գրանցման համար քարտի ընդունելի լինելու կամ չլինելու հանգամանքը:

բ) Բանկն իրավունք ունի քարտի բլոկավորված լինելու, զեղծարարության կասկածների առկայության և այլ դեպքերում միակողմանիորեն մերժել քարտի գրանցումը:

3) ՔԱՐՏԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՉՓՈՓՈԽՎԵԼԸ.

ա) Էլեկտրոնային վճարային դրամապանակով կատարված գործարքների դեպքում գործում են նույն սակագները, ինչ նախատեսված է տվյալ տեսակի քարտի համար Քարտապանի հետ կնքված պայմանագրով, Բանկի հրապարակված տեղեկատվական ամփոփագրով և տվյալ քարտի համար սահմանված սակագներով ու սպասարկման պայմաններով:

բ) Բանկը էլեկտրոնային վճարային դրամապանակով կատարված գործարքների դեպքում լրացուցիչ սակագներ չի սահմանում:

գ) Դրամապանակը Բանկի քարտով վճարումներ իրականացնելու լրացուցիչ հնարավորություն է:

4) ԲԱՆԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ.

ա) Բանկը պատասխանատվություն չի կրում էլեկտրոնային վճարային դրամապանակների ծառայության մատուցման, աշխատանքի, գործարքների կատարման հետ կապված խնդիրների համար, քանի որ տվյալ ծառայությունը չի մատուցվում Բանկի կողմից:



 IDBank	0900_FO_KRG_300522_Privacy_01_02			ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ
«Այրի Բանկ» ՓԲ Ընկերության կողմից թողարկվող քարտերը էլեկտրոնային վճարային դրամապանակներում գրանցման եվ օգտագործման կանոններ	Կիրառման ամսաթիվը 31/05/2022	Խմբագրություն 1	էջ 3 /3	

բ) Բանկը միայն ապահովում է անվտանգ եղանակով քարտի տվյալների փոխանցումը տվյալ դրամապանակի ծառայությունը մատուցող կողմին և թույլատրում է քարտի օգտագործումը դրամապանակում:

5) ՔԱՐՏԱՊԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ.

ա) Քարտապանը կրում է պատասխանատվություն իր քարտը վճարային դրամապանակում գրանցելու, գրանցված քարտով իրականացված վճարումների, ինչպես նաև այնպիսի տվյալների գաղտնիության պահպանման համար, ինչպիսիք հնարավորություն են տալիս ապաբլոկավորել վճարային դրամապանակը պարունակող սարքավորումը:

բ) Ցանկացած երրորդ անձ, ով տիրապետում է Քարտապանի սարքավորման ապաբլոկավորման գաղտնաբառին կամ ունի հնարավորություն իր կենսաչափական տվյալներով ապաբլոկավորել սարքավորումը, կարող է իրականացնել վճարումներ Քարտապանի քարտից:

գ) Քարտապանը պարտավոր է անմիջապես տեղեկացնել Բանկին վճարային դրամապանակում գրանցված քարտի բլոկավորման անհրաժեշտության մասին, եթե կորցրել է սարքավորումը և/կամ վերջինիս օգտագործման տվյալները հասանելի են դարձել կամ կարող են հասանելի դառնալ երրորդ անձի:

6) ՎԵՃԵՐ

ա) Էլեկտրոնային վճարային դրամապանակի վերաբերյալ հարցերը, վեճերը կամ բողոքները լուծվում են դրամապանակի մատակարար ընկերությանը կողմից:

բ) Եթե Քարտապանի հարցը, վեճը կամ բողոքը վերաբերում է Բանկի կողմից թողարկված քարտին, ապա անհրաժեշտ է կապ հաստատել Բանկի հետ՝ հետևյալ կապի միջոցներով.

+374 60 27 33 33, +374 12 33 33 33 հեռախոսահամարով,

info@idbank.am, support@idbank.am էլ հասցեին կամ

www.idbank.am կայքում նամակ ուղարկելով:

